Ը. ԶՐՈՒՅՑ-ԽՆԴԻՐՆԵՐ

1(262).

Իրեք ախպեր ունեն եռեսուն (30) ոչխար; Տասը (10) կենդ-կենդ են ծնել, տասը (10)՝ ճուխտ-ճուխտ, տասն էլ՝ իրեք-իրեք: Հմի բաժանվում են, պետք ա էնպես բաժանեն, որ և՛ գառները հավասար ըլեն, և՛ ոչխարնին, բայց գառը մորից չպիտի անջատվի:

Պատասխան. Տասը ճուխտ-ճուխտ ծնող ոչխարներին մի եղբորն են տալիս, կենդ-կենդ ծնող ոչխարները և երեք-երեք ծնող 5-ական կիսում են մյուս երկու եղբայրների միջև:

2(263).

Սեղանի վրա եփած ձվեր կան: Մեծ եղբայրը մտնում ա, բոլոր ձվերի կեսը և կես ձու ուտում, գնում: Երկրորդ եղբայրն ա գալիս, մնացած ձվերի կեսը և կես ձու ուտում, գնում: Երրորդ եղբայրն ա գալիս, մնացած ձվերի կեսը և կես ձու ուտում, գնում: Չորրորդ եղբայրն ա գալիս, մնացած ձվերի կեսը և կես ձու ուտում, գնում: Սղանի վրա էլ ոչինչ չի մնում: Սեղանին քանի՞ ձու կար դրված:

Պատասխան. Ընդամենը՝ 15 ձու:

Մեծ եղբայրը կերավ 15-ի կեսը և կես ձու՝ 7,5+0,5=8 ձու:

Երկրորդ եղբայրը կերավ մնացած 7 ձվի կեսը և կես ձու՝ 3,5+0,5=4 ձու:

Երրորդ եղբայրը կերավ մնացած 3 ձվի կեսը և կես ձու՝ 1,5+0,5=2 ձու:

Չորրորդ եղբայրը կերավ մնացած 1 ձվի կեսը և կես ձու՝ 0,5+0,5=1 ձու:

3(264).

Երգնքովը ղշեր են քյնըմ: Մի ղուշ ղի ա տալի.

- Արա՛,- ասըմ ա,- հարիր ղուշ, էտ ո՞ւր եք քյնըմ:

Ընդեղից պադասխանըմ ա մեկն, ասըմ ա.

- Մենք հարիրը չենք, մեզ ղադաՀն, մեկ էլ մեզ ղադաՀն, մեր կիսի ղադաՀն, մեր քառորդի ղադաՀն, տուէ էլ մեզ հետ, նոր հարիր կըլենք:

Քանի՞սն ա երգընքըմը:

Պատասխան. 36 ղուշ:

ա) կրկնակին – 72 ղուշ,

բ) 36-ի կեսը՝ 18 +72=90 ղուշ

գ) 36-ի քառորդը՝ 9+90=99 ղուշ

դ) 99ղուշ+1ղուշ(հարցնողը)=100 ղուշ:

4(265). ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ-ԽՆԴԻՐ

Ծուկն ու կեսը՝ կապեկ ու կես,
15 ծուկը քանի՞ կապեկ կանի:

Պատասխան. 15 կոպեկ: